Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Համայն մեր ժողովրդին ի Հայաստան, ի Արցախ և ի Սփյուռս ողջույն ենք հղում և օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և շնորհավորում Հայաստանի Հանրապետության Անկախության Օրվա տոնական առիթով:

Մեր պատմության նոր էջն է բացում 1991 թ. սեպտեմբերի 21-ը: Օր աստվածօրհնյալ, որի գերապանծ խորհուրդը նշանավորելու ու տոնելու են նաև մեր սերունդները:

Չընկրկեց մեր ժողովուրդը Արցախի ազատագրության պայքարի, երկրաշարժի ու շրջափակման դժվարությունների և զոհողությունների առջև, այլ միասիրտ ու միաբան աներկբա պաշտպանեց ազատ ապրելու իր իրավունքը: Դժվարին, բայց վերընթաց ուղի ենք անցել նաև մեր նոր պետականությունը ու նոր կյանքը կառուցելու ճանապարհին, որը մեր ժողովրդի միասնական ջանքերով, հավատով, նվիրումով ու սիրով առավել լայնահուն պիտի դառնա ու լուսավոր: Պիտի հոգանք ազատ Հայաստանի ամեն օրվա համար՝ հանուն մեր Հայրենիքի առաջընթացի ու բարօրության, հանուն համայն հայության միացյալ ու պայծառ գալիքի:

Աղոթք ու մաղթանք ենք բարձրացնում երկինք, որ Տերը Հայրախնամ Իր Աջի ներքո պահպանի Հայաստանի Հանրապետությունը, շնորհով լեցուն ու հավատով զորացյալ պահի մեր ժողովրդին՝ ապրելու և գործելու ի սեր և ի փառս հայրենյաց:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեսեանն»:

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբերի 2005 թ.